ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
Փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№E/40/2382-20 առ“14” 12 2020թ.

Ձեր № ա/հ առ“30” նոյեմբերի 2020թ.

«Վիշկա» ՍՊԸ տնօրեն
պարոն Ս. Մինասյանին

[Պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ]

Հարգելի պարոն Մինասյան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ նաև Գնորդ) կարիքների համար խողովակների և մետաղների (այսուհետ՝ նաև ապրանք) ձեռք բերման նպատակով ս/թ հունիսի 2-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-18/20» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «Վիշկա» ՍՊԸ (այսուհետ՝ նաև Վաճառող) և «ՀԱԷԿ» ՓԲԸ միջև 2020թ. օգոստոսի 3-ին կնքվել է թիվ 01/213 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): Պայմանագրով մատակարարվող խողովակների և թիթեղի համար սահմանվել է «4-ից 6-րդ չափաբաժինների համար՝ արտադրող ձեռնարկությունը պետք է ունենա միջուկային էներգետիկայի համար արտադրման հավաստագիր: Ապրանքները պետք է ունենան պատրաստման որակի և մետաղի հավաստագրեր, համաձայն ՊՀԱԷԳ-7-008-89-ի: Արտադրանքի ընդունումը պետք է իրականացվի լիազորված կազմակերպության կողմից ըստ որակի պլանի՝ համաձայն ՀՊ-071-18, ՊԴ ԷՕ 1.1.2.01.0713-2013 և ՊԴ ԷՕ 1.1.2.05.0929-2013 փաստաթղթերի»:

Հիշեցնեմ Ձեզ, որ ս/թ նոյեմբերի 26-ի թիվ E/40/2244-20 գրությամբ «Վիշկա» ՍՊԸ-ն տեղեկացվել է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի ՏՎԲ-ի ս/թ նոյեմբերի 25-ի մուտքային վերահսկողության №11-20-339 ակտի վերաբերյալ, որի համաձայն ս/թ նոյեմբերի 18-ին (հաշիվ-ապրանքագիր թիվ U7023775529) մատակարարված ապրանքներին կից փաստաթղթերը չեն համապատասխանում պայմանագրով սահմանված փաստաթղթերին, մասնավորապես՝

- չեն ներկայացվել պատրաստման որակի և մետաղի հավաստագրերի բնօրինակները,
- առկա չեն եղել արտադրող ձեռնարկությունների միջուկային էներգետիկայի համար արտադրման հավաստագիրը;
- չեն ներկայացվել լիազորված կազմակերպությունների կողմից հաստատված որակի պլանները:

Սույն գրությամբ «Վիշկա» ՍՊԸ-ին առաջարկվել է ներկայացնել պայմանագրով սահմանված վերը նշված փաստաթղթերը, որից հետո Ձեր կողմից ստացված հիմնավորումները (փաստաթղթերը) կրկին եղել են թերի և ոչ լիարժեք:

Համաձայն կողմերի միջև կնքված Պայմանագրի՝

- 1.1 կետի - «Վիշկա» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Վաճառող) պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ Գնորդ) մատակարարել պայմանագրի N1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված խողովակներ և մետաղներ (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար,
- 2.1.1 կետ - Գնորդն իրավունք ունի ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրացուցային օրից ավելի,
- 2.1.4 կետ - Գնորդն իրավունք ունի, եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

  ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

  բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

  գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:
- 2.1.7 կետ - Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.
- 2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

  ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

  բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրացուցային օրից ավելի,
- 2.4.1 կետ – Վաճառողը պարտավոր է գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:
- 2.4.4 կետ - Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր,
- 2.4.6 կետ – Վաճառողը պարտավոր է հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:
- 2.4.7 կետ - Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը,
- 2.4.8 կետ – Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

- 2.4.9 կետ - Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները,
- 6.1 կետ - Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար
- 6.3 կետ - Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում,
- 6.4 կետ - Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

Հայտնում ենք Ձեզ, որ հիմք ընդունելով «Վիշկա» ՍՊԸ և «ՀԱԷԿ» ՓԲԸ միջև 2020թ. օգոստոսի 3-ին կնքված թիվ 01/213 պայմանագրի վերոգրյալ դրույթները և «ՀԱԷԿ» ՓԲԸ ս/թ նոյեմբերի 25-ի թիվ 11.20-339 ակտը՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «Վիշկա» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 2020թ. օգոստոսի 3-ին կնքված թիվ 01/213 պայմանագիրը և առաջարկում հնարավորինս սեղմ ժամկետներում ետ տանել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը:

Հարգանքով,

Գլխավոր տնօրենի ժ/պ՝ **Է. Մարտիրոսյան**

Կազմեց՝ Հ. Ռամազյան
ԳԲԲ գլխավոր մասնագետ
Հեռ. 010-20-04-91